# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՅՈՒՆԱՇՈՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Լոռու մարզ գ. Ձյունաշող

Dzyunashogh.lori@mta.gov.am

№ 75 Լոռու մարզպետ՝

« 19» 10. 2015 թ. պարոն Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում եմ Ձեզ Լոռու մարզի Ձյունաշող համայնքի ավագանու « 14»10.2015 թ. № 14–Ն, « 14»10.2015 թ. № 15–Ա և ղեկավարի « 15» 10.2015 թ. №09–Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Ձյունաշողի գյուղապետ՝ Գ. Գրիգորյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14» հոկտեմբեր 2015 թվականի N 14-Ն

### ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի <<ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ Ձյունաշող համայնքի ավագանին որոշում է.

1. Ձյունաշող համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 8 -ի << Ձյունաշող համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 23-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գրիգորյան Լարիսա Սաշիկի | | | |
| Ծատուրյան Իշխան Միխայելի | | | |
| Հարությունյան Լենինդ Ապրեսի | | | |
| Մկրտումյան Նադեժդա Ալեքսանդրի | | | |
| Վարդանյան Սաշիկ Վարդանի | | | |

Ձյունաշող համայնքի ղեկավար՝ Գ. Գրիգորյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14» հոկտեմբեր 2015 թվականի N 15 -Ա

## ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և համաձայն Ձյունաշող համայնքի ուսանողի ներկայացրած դիմումի համայնքի ավագանին որոշում է՝

Ձյունաշող համայնքի բյուջեի 4729 (09-03-02-51) հոդվածից ( միջին մասնագիտական կրթություն) 75000 ( յոթանասունհինգ հազար) դրամ փոխանցել ուսման վարձ հետևյալ ուսանողի համար՝

| Ա.Ա.Հ. | Ուսման հաստատությունը | Ուս.վարձի չափը(ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Գրիգորյան Էդուարդ | Վանաձորի պետ բժշկական քոլեջ ՊՈԱԿ / 2-րդ կուրս/ | 75 000 |

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Գրիգորյան Լարիսա Սաշիկի | | | |
| Ծատուրյան Իշխան Միխայելի | | | |
| Հարությունյան Լեոնիդ Ապրեսի | | | |
| Մկրտումյան Նադեժդա Ալեքսանդրի | | | |
| Վարդանյան Սաշիկ Վարդանի | | | |

Ձյունաշող համայնքի ղեկավար՝ Գ. Գրիգորյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձյունաշող համայնք, հասցե գ, Ձյունաշող
Dzyunashogh.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

, <<15 >> հոկտեմբեր 2015 թվականի N 09 -Ա

## ՁՅՈՒՆԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և հաշվի առնելով Ձյունաշող համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 14-Ն որոշումը.

Որոշում եմ՝

1. Հաստատել Ձյունաշող համայնքի 2015 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները համաձայն 1-2 հավելվածների:

2. Ուժը կորցրած ճանաչել Ձյունաշող համայնքի ղեկավարի 2015 թվականի հուլիսի 6-ի <<Ձյունաշող համայնքի 2015 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները հաստատելու մասին >> N 05-Ա որոշումը:

Ձյունաշողի գյուղապետ՝ Գ. Գրիգորյան